# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

3201 Սյունիքի մարզ ք. Գորիս, Անկախության 3, հեռ.
(0284)2-25-52

*09 ապրիլ 2018թ.* N 01/03/03-326

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Հակոբյան

Կից ուղարկվում է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 7-ի արտահերթ նիստում ընդունված N- 25-<<Ա>> -ից մինչև N-28-<<Ա>> որոշումները:

Առդիր՝ 25 թերթ:

**ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

*Կատ.՝ Լուսինե Ղուկասյան*

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՏԻՑ № 3176
«12» 04 2018

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07/04/2018

## ՈՐՈՇՈՒՄ **N 25-Ա**

### ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **2018** ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ **7-Ի** ԹԻՎ **1** ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով /նախաձեռնությունը Գորիս համայնքի ղեկավար՝ Ա. Առուշանյանի/, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել ՀՀ Սյունիքի Մարզի Գորիս համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 7-ի թիվ 1 արտահերթ նիստի օրակարգը

1. <<ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.2018Թ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՇԱԿՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՌՍԿԱՆՅԱՆ ՌՍԿԱՆ

ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2018թ. ապրիլի «07»
ք.Գորիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07/04/2018

**ՈՐՈՇՈՒՄ N 26-Ա**

<ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով Գորիսի համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել <<Գորիս համայնքի բարեկարգում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՌՈՍԿԱՆՅԱՆ ՌՈՍԿԱՆ

ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2018թ. ապրիլի «07»
ք.Գորիս

Գորիս համայնքի ավագանու 2018 թվականի
ապրիլի 07-ի N 26-Ն որոշման

## <<Գորիս համայնքի բարեկարգում>> ՀՈԱԿ

| | Պաշտոնը | Հաստիքների քանակը | Աշխատողների թիվը | Դրույքի չափը | Գումարը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 140000 | 140000 |
| 2 | ինժեներ | 1 | 1 | 130000 | 130000 |
| 3 | հաշվապահ | 1 | 1 | 110000 | 110000 |
| 4 | հաշվետար | 1 | 1 | 80000 | 80000 |
| 5 | աշխղեկ | 1 | 1 | 130000 | 130000 |
| 6 | վարպետ | 1 | 1 | 130000 | 130000 |
| 7 | հավաքարար | 1 | 1 | 150000 | 150000 |
| 8 | բանվոր | 14 | 14 | 150000 | 2100000 |
| 9 | վարորդ | 6 | 6 | 150000 | 900000 |
| 10 | որսորդ | 1 | 1 | 73000 | 73000 |
| 11 | պահակ | 2 | 2 | 73000 | 146000 |
| 12 | հսկիչ-փականագործ | 1 | 1 | 100000 | 100000 |
| | **Ընդամենը** | **31** | **31** | | **4189000** |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07/04/2018

ՈՐՈՇՈՒՄ **N 27-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **2017** ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ **28**-Ի ԹԻՎ **69**-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 28-ի<< ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցների թվակաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 31-Ա և 2017 թվականի փետրվարի 28-ի թիվ 05-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 69-Ա որոշման 12-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ /կցվում է/:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՌՍԿԱՆՅԱՆ ՌՍԿԱՆ

ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2018թ. ապրիլի «07»
ք.Գորիս

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գորիս համայնքի ավագանու 2018 թվականի
ապրիլի 7-ի N 27-Ա որոշմամբ

## <<Գորիս համայնքի բարեկարգում և բնակարանային տնտեսություն>> ՀՈԱԿ

| | Պաշտոնը | Հաստիքների քանակը | Աշխատողների թիվը | Դրույքի չափը | Գումարը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 140000 | 140000 |
| 2 | հաշվապահ | 1 | 1 | 110000 | 110000 |
| 3 | հաշվետար | 1 | 1 | 80000 | 80000 |
| 4 | աշխղեկ | 1 | 1 | 130000 | 130000 |
| 5 | էլեկտրիկ | 2 | 2 | 130000 | 260000 |
| 6 | հավաքարար | 10 | 10 | 150000 | 1500000 |
| 7 | բանվոր | 12 | 12 | 150000 | 1800000 |
| 8 | վարորդ | 7 | 7 | 150000 | 1050000 |
| 9 | հաշվառիչ | 2 | 2 | 100000 | 200000 |
| 10 | պահակ | 1 | 1 | 73000 | 73000 |
| 11 | օպերատոր | 1 | 1 | 80000 | 80000 |
| | Ընդամենը | 39 | 39 | | 5423000 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

07/04/2018

## ՈՐՈՇՈՒՄ **N 28-Ա**

**2018Թ** ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՇԱԿՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի, 4-րդ, 7-րդ, 9-րդ կետերով, 18-րդ հոդվածի 4-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 29.12.2016թ. № 1256-Ա ՀՀ 2018թ. բյուջետային գործընթացը սկսելու մասին որոշմամբ հաստատված՝ տեղական ինքնակառավարման մարմիններին պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ հատկացնելու կարգը, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով համայնքապետարանի կողմից մշակված համայնքի սոցիալական զարգացմանն ուղղված՝ «Դիտակետի և հարակից ճանապարհի վերակառուցում», «Մշակույթի տան հարակից ճեմուղու բարեկարգում», «Կենտրոնական հրապարակի հարող տարածքի բարեկարգում / Գավառագիտական թանգարանի հարակից այգի/» ծրագրերը և 2018թ. բյուջետային ֆինանսավորման հայտերը՝ համաձայն № 1, № 2, №3 հավելվածների:

2,Բյուջետային ֆինանսավորման հայտերը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ գնահատման և պետական նպատակային հատկացումներ ստանալու նպատակով:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՌՍԿԱՆՅԱՆ ՌՍԿԱՆ

ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2018թ. ապրիլի «07»
ք.Գորիս

Հավելված N-1
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու
2018 թվականի ապրիլի 07-ի N-28-Ա որոշման

**ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային ՀԱՅՏ**

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | Դիտակետի և հարակից ճանապարհի վերակառուցում |
| Մարզ | Սյունիքի մարզ |
| Համայնքը /համայնքները | Գորիս համայնք<br>Գորիս բնակավայր |
| Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից | Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 240կմ է: |
| Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք | Համայնքը սահմանամերձ է: |
| Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը | Գորիսը գտնվում է Սյունիքի մարզի հյուսիսի-արևելյան հատվածում: Համայնքի տարածքը կազմում է 31969.28 հեկտար, բնակչությունը՝ 29721 մարդ. Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1398 մ, հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 240 կմ, մարզկենտրոն Կապանից՝ 67 կմ: Համայնքն ունի աշխարհագրական հարմար դիրք:<br>Գորիսը, որպես ձեռնարկատիրական գործունեության և ներդրումների համար կայուն, ապահով, զբոսաշրջության համար գրավիչ, պատմամշակութային ռեսուրսներով հարուստ համայնք, մեծ ներուժ ունի առաջարկելու մրցունակ զբոսաշրջային ծառայություններ:<br>Այցելության հայտնի վայրերից են «Տաթևի վանքը», «Սատանայի կամուրջը», Խնձորեսկի «Ճոճվող կամուրջը» աշխարհում ամենաերկար թռիչքով «Տաթևի ճոպանուղին» և այլն: Հին Գորիսի «Քարե անտառը» չափազանց մեծ հետաքրքրություն է առաջացնում արկածասեր մարդկանց մոտ:<br>Վերջին հինգ տարիների ընթացքում զբոսաշրջության ոլորտը զգալի աճ է ունեցել՝ ներգնա զբոսաշրջային այցելությունների թվի առումով: Օրինակ՝ 2017 թվականին 6000-ով ավելի զբոսաշրջիկ է օգտվել համայնքի հյուրանոցային ծառայություններից, քան՝ 2016թ-ին. Ավելացել է նաև պատմամշակութային վայրեր այցելող հյուրերի թիվը միայն խնձորեսկի Ճոճվող կամուրջ այցելողների թիվը 2017թ-ին ավելացել է 30.000-ով:<br>Զբոսաշրջությունը համայնքի համար կարևոր դեր ունի աշխատատեղերի ստեղծման գործընթացում: Գործող հյուրանոցներում, ռեստորաններում, ժամանցի վայրերում, տրանսպորտային համակարգում և հուշանվերների վաճառքի կետերում, անուղղակիորեն՝ զբոսաշրջության հետ առնչվող ձեռնարկություններում (սննդի և այլ ծառայություններ, առևտուր) վերջին մեկ տարվա ընթացքում զբոսաշրջության հաշվին 217 աշխատատեղ է ստեղծվել համայնքում: Շուրջ 40 աշխատատեղ՝ տարբեր կազմակերպությունների ծրագրերում ներգրավված անձինք են, այդ թվում՝ ձեռագործությամբ, հուշանվերների զարգացման և վաճառքի ոլորտում,<br>Հյուրանոցային, սրճարանային և սպասարկման այլ ոլորտում աշխատանքի անցած աշխատակիցների թիվը 54 է: Սննդի, սպասարկման ոլորտում ավելացել է 26 աշխատատեղ, և 97-ը՝ շինարարության ոլորտում:<br>Թեև զբոսաշրջությունը համայնքի համար ապահովում է կայուն եկամուտներ ունենալու հնարավորություն և արձանագրում է իրատեսական զարգացում, այնուամենայնիվ առկա են խնդիրներ, որոնք խոչընդոտում են ոլորտի հեռանկարային զարգացմանը:<br>Հաշվի առնելով զբոսաշրջության տնտեսական, սոցիալական դերն ու նշանակությունը, այն համարվում է Գորիս համայնքի ռազմավարական զարգացման գերակա ճյուղերից մեկը և ուղղված է համայնքի կայուն տնտեսական զարգացմանն ու կենսամակարդակի բարձրացմանը:<br>Զբոսաշրջության ոլորտը զարգացնելու նպատակով՝ Գորիսում անհրաժեշտ է խթանել նոր ենթակառուցվածքների ձևավորումը և առկա ենթակառուցվածքների բարեկարգումը:<br>Գորիսում Խորհրդային տարիներին կառուցված դիտակետը համայնք այցելող |

| | |
|---|---|
| | զբոսաշրջիկների համար մեծ հետաքրքրություն առաջացնող վայրերից մեկն է: Դիտակետից բացվում է Հին Գորիս արգելոց-թանգարանի գեղեցիկ տեսարանը, Լասսի Խութը, որը երեկոյան ժամերին ևս մեծ հետաքրքրություն է առաջացնում՝ շնորհիվ դեպի քարանձավներ վեր խոյացող ժառերը լուսավորող լուսային էֆեկտների: Հարակից տարածքներում գործում են սրճարաններ, հյուրատներ:<br>Սակայն, տարիների ընթացքում որևէ է շինարարական աշխատանք չի իրականացվել բարձունքի հատվածում և դիտակետն այժմ անմխիթար, անհրապույր վիճակում է: Անհրաժեշտ է վերականգնել այս տարածքի երբեմնի տեսքը՝ ապահովելով զբոսաշրջիկների մեծ հոսք և խթանելով հարակից տարածքներում գտնվող սպասարկան օբյեկտների գործունեությունը: Տարածքի բարեկարգումն իրենից ենթադրում է հյուրերի ժամանցի արդյունավետ կազմակերպում, մատուցվող ծառայությունների որակի բարելավում, որի արդյունքում կակտիվանան նաև զբոսաշրջիկների շփումները բնակչության հետ Տեղի մշակույթին ու ավանդույթներին մոտիկից ծանոթանալը, որակյալ ծառայություններից օգտվելը համայնքի համար կստեղծի լրացուցիչ եկամուտներ ստանալու հնարավորություն, կնպաստի սոցիալական աշխուժությանը, իսկ զբոսաշրջության ստեղծած աշխատատեղերը, դրանցից ստացված եկամուտները կարևոր գործոն են արտագաղթի կանխման համար. Գորիս համայնքում նախորդ տարի 17.000 զբոսաշրջիկ է գիշերել, հիմնականում զբոսաշրջիկները չեն գիշերում, քանի որ ենթակառուցվածքների խնդիր կա համայնքում, մինչդեռ անհրաժեշտ է ստեղծել բարեկեցիկ միջավայր և մրցունակ ենթակառուցվածքներ, ծառայություններ, որպեսզի զբոսաշրջիկը գիշերի համայնքում, օգտվի առաջարկվող ծառայություններից և լրացուցիչ եկամուտներ ստեղծի համայնքի համար:<br>Ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ համայնքում կապահովվի հետևյալ ուղղակի և անուղղակի արդյունքը: Ուղղակի երկամուտներ՝ զբոսաշրջության ոլորտում ստեղծված աշխատատեղերից: Անուղղակի եկամուտներ՝ ապրանքների և մատուցվող ծառայությունների վաճառքից: Նշված առաջարկությունների իրականացումը հնարավորություն կտա նաև մեկ քայլ առաջ անցնել՝ մոտենալով համայնքի զարգացման տեսլականին·<br>Դիտակետի հատվածում գործում են սրճարաններ, հյուրանոց և հյուրատներ, սակայն տարածքների անբերեկարգ վիճակի պատճառով՝ հյուրերի և ծառայություններից օգտվողների թիվը բավականին քիչ է: Մինչդեռ դիտակետ այցելող հյուրերի թիվը մի քանի անգամ ավելանալու պարագայում, գործող բիզնեսների աշխուժացման և նորերի ստեղծման համար արդյունավետ միջավայր կստեղծվի: Տարածքը կծառայի ոչ միայն որպես տեսարժան վայր, նաև տնտեսական զարգացման նոր հնարավորություն կստեղծի համայնքի համար, քանի որ այն գտնվում է հարմար դիրքում սրճարանային և սպասարկման այլ օբյեկտների ավելացման համար, հյուրերի և տեղացիների սոցիալական շփումների և ժամանցի կազմակերպման առումով Դիտակետի հատվածի հիմնանորոգման արդյունքում նոր հնարավորություններ կստեղծվեն բիզնես միջավայրի առաջխաղացման, նոր աշխատատեղերի, նոր ծառայությունների ավելացման համար:<br>Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը բխում է նաև Գորիսը՝ 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք հռչակվելու փաստից, ինչը ենթադրում է մեծաթիվ պաշտոնական հյուրերի այցելություն Գորիս: Գորիսում անցկացվելիք միջոցառումների բարձր որակը և համայնքի ներկայանալի տեսքը անհրաժեշտ է նաև նրանով, որ Գորիսը փաստորեն ներկայացնելու է ողջ ՀՀ-ն: |
| Ծրագրի իրականացման նպատակը | **Ընդհանուր նպատակ.**<br>✓ Ենթակառուցվածքների բարելավման միջոցով նպաստել զբոսաշրջության զարգացմանը՝ Գորիս համայնքում ստեղծելով տնտեսական զարգացման համար բարենպաստ միջավայր, ապահովելով երկարաժամկետ զարգացում<br><br>**Հատուկ նպատակներ.**<br>✓ ընդլայնել ժամանցի և հանգստի գոտիները<br>✓ քաղաքաբնակների և այցելուների համար ստեղծել ժամանցի կազմակերպման նոր հնարավորություններ<br>✓ նպաստել դիտակետի հարակից տարածքում մանրածախ առևտրի զարգացմանը |
| Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով | Նախատեսված տարածքը հանդիսանում է համայնքային սեփականություն:<br>Ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են: |

| | |
|---|---|
| **պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում** | |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրա-կանացման նպատակին** | ✓ *Բարելավվել է Զբոսաշրջային ենթակառուցվածքների, պատմական նշանակության որոշ վայրերի ներկա անմխիթար վիճակը, որի շնորհիվ ավելի շատ քանակով և բարձր վճարողունակությամբ զբոսաշրջիկներ են սպասարկվում, ավելացել են հյուրանոցները, սպասարկման օբյեկտները: Ստեղծվել է 250 աշխատատեղ՝ ոլորտի աշխուժացման արդյունքում:*<br>✓ *Բարելավվել է զբոսաշրջության կայուն զարգացման և ոլորտում մատուցվող ծառայությունների որակը, համայնքում ձևավորվել և զարգացել են ոլորտը սպասարկող ենթակառուցվածքները՝ միջհամայնքային ճանապարհներ, ժամանցի վայրեր, պատմական նշանկության վայրեր*<br>✓ *Բարելավվել է հյուրանոցային տնտեսության օբյեկտների, բարձրակարգ հյուրանոցների գործունեությունը, համայնքում ձևավորվել է զբոսաշրջային տների ցանց: Ավելացել է համայնք այցելող զբոսաշրջիկների թիվը:* |
| **Ծրագրի յուրաքանչյուր արդյունքի հասնելու համար անհրաժեշտ միջոցառումները** | ✓ *նախագծանախահաշվային աշխատանքների իրականացում*<br>✓ *գնման գործընթացի կազմակերպում*<br>✓ *շինարարական աշխատանքների իրականացում / Տարածքը՝ 4400քմ մակերես/*<br>• Դիտահրապարակների կառուցում /2 Հատ ՝ 24 մ<br>• Քար ե  հ ենապատի կառուցում /448 խմ<br>• Ճեմուղիների կառուցում/ 2550 քմ<br>• Հեծանվային անցուղիների կառուցում ՝ բետոնե կանոնավոր սալիկներով /334.8 քմ<br>• Ավտոճանապարհի կառուցում՝ ասֆալտբետոնե ծածկույթով /1143 քմ<br>• Ջրահեռացման համակարգի անցկացում /420 գծամետր<br>• Փայտե, քարե նստարանների տեղադրում՝ 12 հատ<br>• Ծառատնկում՝ 60 հատ, կանաչապատում՝ 400քմ, արտաքին լուսավորության անցկացում՝ 12 սյուն<br>✓ *Դիտակետի հանձնում շահագործման*<br>✓ *համայնքի բյուջեում պահպանման և շահագործման համար անհրաժեշտ ծախսերի նախատեսում* |
| **Ծրագրի ազդեցությունը շահառուների վրա** | ***Շահառուների քանակը:***<br>*- Տարվա կտրվածքով դիտակետի տարածք այցելող զբոսաշրջիկների թիվը կրկնապատկվել է՝ դառնալով 25.000*<br>*- Ավելացել են սպասարկման և հյուրանոցային, հյուրատնային օբկեկտները*<br>*- Գորիսում գործող 23 հյուրանոցային տնտեսության օբյեկտների թիվը հասել է 35-ի*<br>***Եկամուտի ավելացման չափ:***<br>*- Հյուրանոցների և սրճարանների եկամուտի 17% աճ:*<br>*- Ժամանցի և հանգստի կազմակերպման հնարավորությունների ավելացում 4 ով:* |
| **Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող հիմնական աշխատատեղեր** | *Ծրագրի իրականացման ընթացքում*<br>✓ *կստեղծվի 12-17 աշխատատեղ կառուցապատման աշխատանքների իրականացման նպատակով*<br>*Ծրագրի իրականացման արդյունքում*<br>✓ *կստեղծվեն նոր բիզնեսներ՝ հարակից տարածքներում՝ մոտ 10 նոր ձեռնարկություն:* |
| **Ծրագրի սպասվող միջնաժամկետ և երկարաժամկետ արդյունքները** | ***Առկա խնդիրները:*** *- ժամանցի և հանգստի կազմակերպման սակավ հնարավորություններ*<br>*- քաղաքային աշխուժության ցածր մակարդակ*<br>*- կանաչապատ տարածքների սակավություն*<br><br>***Երկարաժամկետ արդյունք:*** *- Գորիսը սոցիալապես և տնտեսապես զարգացած է ու գրավիչ՝ որպես քաղաքային միջավայր և զբոսաշրջային կենտրոն* |

| | |
|---|---|
| | *Միջնաժամկետ արդյունք: - ժամանցի և հանգստի նոր վայրի, առկայություն*<br>*- քաղաքային կյանքի աշխուժացում և ժամանցի նոր հնարավորությունների առկայություն*<br>*- զբոսայգու հարակից տարածքում մանրածախ առևտրով զբաղվող տնտեսվարողների եկամուտների աճ* |
| Համայնքի 2017 թվականի բյուջեն և բյուջեի կատարողականը | *Համայնքի 2017թ-ի բյուջեի կատարողականը*<br>*Բյուջեի եկամուտները և ծախսերը անվանումը*<br>*Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտները*<br>*Պլան Փաստացի Տոկոս*<br>*772,136,500 817,747,363 106*<br><br>*Այդ թվում՝*<br>*Սեփական եկամուտներ*<br><br>*Պլան Փաստացի Տոկոս*<br>*153,503,000 204,103,364 132.96*<br><br>*2. Ընդամենը համայնքի բյուջեի ծախսերը, որից՝*<br><br>*2.1 Վարչական բյուջեի ծախսեր 730,794,570.0*<br>*2.2 Ֆոնդային բյուջեի ծախսեր 46,493,820.2*<br><br>*Համայնքի ֆոնդային բյուջեի 2017թ. Փաստացի ծախսերի բացվածք*<br><br>*1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ 13,808,920*<br>*2. Ճանապարհային տնտեսություն 33,191,872*<br>*3. Փողոցային լուսավորության ցանցի կառուցում 14,268,060*<br>*4. Այլ ծախսեր 3,670,000*<br><br>*Ընդամենը*<br>*64,938,852 ՀՀ դրամ* |
| Համայնքի 2018 թվականի բյուջեն | *Ընդամենը՝ 960,860,700.0 դրամ*<br>*Վարչական՝ 826,163,200.0 դրամ*<br>*Ֆոնդային՝ 134,697,500.0 դրամ*<br><br>*Համայնքի ֆոնդային բյուջեի 2018թ. Պլանավորված ծախսերի բացվածքը*<br><br>*1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ 3,000,000*<br>*2 Շրջակա միջավայրի պաշտպանություն 9,6097,500*<br>*3. Ճանապարհային տնտեսություն 30,600,000*<br>*4. Այլ ծախսեր 5,000,000* |
| Համայնքի 2018 թվականի բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքե-րի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով 2018 թվականի կան-խատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման | *Համայնքի բյուջեի ֆոնդային մասը տարեսկզբին կազմում էր 134,697,500.0 դրամ*<br>*2018թ. բյուջետային տարում համայնքի բյուջեի ֆոնդային մասի մուտքեր կանխատեսվում են 11,000,000.0 դրամի չափով: Համայնքի սեփականությունը հանդիսացող ֆոնդերի օտարումից (տարածքների վաճառքից):*<br><br>*Ընդամենը ֆոնդային բյուջեի գումարը՝ 145,697,500.0 մլն դրամ*<br>*Դիտակետի և հարակից ճանապարհի համաֆինանսավորման համար գումարը՝ 59,286,887 2 դրամ* |

| | |
|---|---|
| անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով | |
| Ծրագրի ընդհանուր բյուջեն | *148,217,218 ՀՀ դրամ (100%)* |
| Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը | *59,286,887.2 ՀՀ դրամ (40%)* |
| Այլ ներդրողներ | *Այլ ներդրողներ չկան* |
| Ծրագրի իրականացման տևողությունը | *Ակիզբ մայիս 2018թ.* *Տևողությունը՝ 6 ամիս:* |
| Ծրագրի ծախսերը | *Նախագծանախահաշվային և այլ փաստաթղթերը կցվում են* |
| Ամսաթիվ | “05” ապրիլ 2018թ. |

**Այլ տեղեկություններ ծրագրի մասին.** *(Նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում).*

**Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Մեևուա Հովսեփյան**
**Հեռախոս, Էլ. Փոստ՝ 099-47-00-44, joujou1354@mail.ru**

---

**Համայնքի ղեկավար** <u>Առուշ Առուշանյան</u>
*(անուն, ազգանուն)*

*ԿՏ.*

Հավելված N-2
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու
2018 թվականի ապրիլի 07-ի N 28-Ա որոշման

ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային

ՀԱՅՏ

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | Մշակույթի փան հարակից ճեմուղու բարեկարգում |
| Մարզ | Սյունիքի մարզ |
| Համայնքը /համայնքները | Գորիս համայնք<br>Գորիս բնակավայր |
| Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից | Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 240կմ է: |
| Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք | Համայնքը սահմանամերձ է: |
| Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը | Գորիսը գտնվում է Սյունիքի մարզի հյուսիսի-արևելյան հատվածում. Համայնքի տարածքը կազմում է 31969.28 հեկտար, բնակչությունը՝ 29721 մարդ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1398 մ, հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 240 կմ, մարզկենտրոն Կապանից՝ 67 կմ: Համայնքն ունի աշխարհագրական հարմար դիրք:<br>Գորիսը, որպես ձեռնարկատիրական գործունեության և ներդրումների համար կայուն, ապահով, զբոսաշրջության համար գրավիչ, պատմամշակութային ռեսուրսներով հարուստ համայնք, մեծ ներուժ ունի առաջարկելու մրցունակ զբոսաշրջային ծառայություններ:<br>Այցելության հայտնի վայրերից են «Տաթևի վանքը », «Սատանայի կամուրջը», Խնձորեսկի «Ճոճվող կամուրջը» աշխարհում ամենաերկար թռիչքով «Տաթևի ճոպանուղին » և այլն: Հին Գորիսի «Քարե անտառը» չափազանց մեծ հետաքրքրություն է առաջացնում արկածասեր մարդկանց մոտ:<br>Վերջին հինգ տարիների ընթացքում զբոսաշրջության ոլորտը զգալի աճ է ունեցել՝ ներգնա զբոսաշրջային այցելությունների թվի առումով: Օրինակ՝ 2017 թվականին 6000-ով ավելի զբոսաշրջիկ է օգտվել համայնքի հյուրանոցային ծառայություններից, քան՝ 2016թ-ին. Ավելացել է նաև պատմամշակութային վայրեր այցելող հյուրերի թիվը միայն խնձորեսկի Ճոճվող կամուրջ այցելողների թիվը 2017թ-ին ավելացել է 30.000-ով:<br>Զբոսաշրջությունը համայնքի համար կարևոր դեր ունի աշխատատեղերի ստեղծման գործընթացում: Գործող հյուրանոցներում, ռեստորաններում, ժամանցի վայրերում, տրանսպորտային համակարգում և հուշանվերների վաճառքի կետերում, անուղղակիորեն՝ զբոսաշրջության հետ առնչվող ձեռնարկություններում (սննդի և այլ ծառայություններ, առևտուր) վերջին մեկ տարվա ընթացքում զբոսաշրջության հաշվին 217 աշխատատեղ է ստեղծվել համայնքում: Շուրջ 40 աշխատատեղ՝ տարբեր կազմակերպությունների ծրագրերում ներգրավված անձինք են, այդ թվում՝ ձեռագործությամբ, հուշանվերների զարգացման և վաճառքի ոլորտում;<br>Հյուրանոցային, սրճարանային և սպասարկման այլ ոլորտում աշխատանքի անցած աշխատակիցների թիվը 54 է: Սննդի, սպասարկման ոլորտում ավելացել է 26 աշխատատեղ, ևս 97-ը՝ շինարարության ոլորտում.<br>Թեև զբոսաշրջությունը համայնքի համար ապահովում է կայուն եկամուտներ ունենալու հնարավորություն և արժանագրում է իրատեսական զարգացում, այնուամենայնիվ առկա են խնդիրներ, որոնք խոչընդոտում են ոլորտի հեռանկարային զարգացմանը:<br>Հաշվի առնելով զբոսաշրջության տնտեսական, սոցիալական դերն ու նշանակությունը, այն համարվում է Գորիս համայնքի ռազմավարական զարգացման գերակա ճյուղերից մեկը և ուղղված է համայնքի կայուն տնտեսական զարգացմանն ու կենսամակարդակի բարձրացմանը:<br>Զբոսաշրջության ոլորտը զարգացնելու նպատակով՝ Գորիսում անհրաժեշտ է խթանել նոր |

| | |
|---|---|
| | ենթակառուցվածքների ձևավորումը և առկա ենթակառուցվածքների բարեկարգումը:<br>Մշակույթի կենտրոնին հարող փողոցը, որպես կենտրոնական հատող հատված, կարևոր նշանակություն ունի, ոչ միայն նրա համար, որ գտնվում է քաղաքի կենտրոնում, նաև մշակութային հաստատությունները կապող հատված է. Գուսան Աշոտի անվան մշակույթի տուն, Պետական Դրամատիկական Թատրոն, Երկրագիտական Թանգարան, Քաղաքի կենտրոնական զբոսայգի, սպասարկման օբյեկտներ, բոլոր այս հաստատությունները կապող կարևոր հատվածն է և զբոսաշրջային կարևոր երթուղի: Հարակից տարածքներում են գտնվում Գորիսի Հին պասաժի կոլորիտային շենքը, որը վերականգնել է և առևտրի կենտրոն է : Պասաժի հիմնական տարածքները ազատ են և բիզնեսի համար նպաստավոր միջավայր է: Ճանապարհահատվածի բարեկարգումը կնպաստի նաև խանութների գործունեության աշխուժացմանը: Շուրջ 20 բիզնես տարածք կարող է գործարկվել և հաջող գործունեություն ծավալել:<br>Կարևոր նշանակության ճանապարհահատվածն ամբողջովին քայքայված վիճակում է և բարեկարգման խիստ կարիք կա: Ուստի, Այդ ճանապարհահատվածի պատշաճ տեսքի բերումը կխթանի մշակութային օջախների գործունեության ակտիվացումը, քանի որ այն նորոգումից հետո կդառնա ոչ միայն բանուկ հատված նաև տարածքը կառանձնանա գեղեցիկ կահավորմամբ ու գրավչությամբ:<br>Վերը նշված բոլոր առաջարկներ ուղղված են առաջնային ծառայությունների ծավալների, որակի և մատչելիության աճին· Այս զարգացումն ինքնին կպահանջի ավելի բարձրակարգ ենթակառուցվածքներ և ծառայություններ, զբոսաշրջության զարգացմանը խթանող ավելի նպաստավոր միջավայր:<br>Այս ամենը կարելի է իրագործել՝ նպաստելով ներգնա և ներքին զբոսաշրջիկների թվի աճին, միաժամանակ ավելացնելով զբոսաշրջությունից ստացվող եկամուտները, առաջարկելով ավելի բարձր զբոսաշրջային ծառայություններ, և համայնքի համար ապահովելով ֆինանսական հոսքեր:<br>Ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ համայնքում կապահովվի հետևյալ ուղղակի և անուղղակի արդյունքը: Ուղղակի երկամուտներ՝ զբոսաշրջության ոլորտում ստեղծված աշխատատեղերից· Անուղղակի եկամուտներ՝ ապրանքների և մատուցվող ծառայությունների վաճառքից: Նշված առաջարկությունների իրականացումը հնարավորություն կտա նաև մեկ քայլ առաջ անցնել՝ մոտենալով համայնքի զարգացման տեսլականին:<br>Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը բխում է նաև Գորիսը՝ 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք հռչակվելու փաստից, ինչը ենթադրում է մեծաթիվ պաշտոնական հյուրերի այցելություն Գորիս: Գորիսում անցկացվելիք միջոցառումների բարձր որակը և համայնքի ներկայանալի տեսքը անհրաժեշտ է նաև նրանով, որ Գորիսը փաստորեն ներկայացնելու է ողջ ՀՀ-ն: |
| Ծրագրի իրականացման նպատակը | ***Ընդհանուր նպատակ.***<br>✓ ենթակառուցվածքների բարելավման միջոցով նպաստել զբոսաշրջության զարգացմանը՝ Գորիս համայնքում ստեղծելով տնտեսական զարգացման համար բարենպաստ միջավայր, ապահովելով երկարաժամկետ զարգացում<br><br>***Հատուկ նպատակներ.***<br>✓ ընդլայնել ժամանցի և հանգստի գոտիները<br>✓ քաղաքաբնակների և այցելուների համար ստեղծել ժամանցի կազմակերպման նոր հնարավորություններ<br>✓ նպաստել զբոսայգու հարակից տարածքում մանրածախ առևտրի զարգացմանը |
| Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում | Զբոսայգու համար նախատեսված տարածքը հանդիսանում է համայնքային սեփականություն· Ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են: |
| Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրա- | ✓ Բարելավվել է Զբոսաշրջային ենթակառուցվածքների, պատմական նշանակության որոշ վայրերի ներկա անմխիթար վիճակը, որի շնորհիվ ավելի շատ քանակով և բարձր վճարողունակությամբ զբոսաշրջիկներ են սպասարկվում, ավելացել են հյուրանոցները, սպասարկման օբյեկտները: Ստեղծվել է 250 աշխատատեղ՝ ոլորտի աշխուժացման |

| | |
|---|---|
| **կանցման նպատակին** | *արդյունքում:*<br>✓ *Բարելավվել է զբոսաշրջության կայուն զարգացման և ոլորտում մատուցվող ծառայությունների որակը, համայնքում ձևավորվել և զարգացել են ոլորտը սպասարկող ենթակառուցվածքները՝ միջհամայնքային ճանապարհներ, ժամանցի վայրեր, պատմական նշանակության վայրեր*<br>✓ *Բարելավվել է հյուրանոցային տնտեսության օբյեկտների, բարձրակարգ հյուրանոցների գործունեությունը, համայնքում ձևավորվել է զբոսաշրջային տների ցանց: Ավելացել է համայնք այցելող զբոսաշրջիկների թիվը:* |
| **Ծրագրի յուրաքանչյուր արդյունքի հասնելու համար անհրաժեշտ միջոցառումները** | ✓ *նախագծանախահաշվային աշխատանքների իրականացում*<br>✓ *գնման գործընթացի կազմակերպում*<br>✓ *շինարարական աշխատանքների իրականացում /Մակերեսը՝ 2000քմ/*<br>• Ճեմուղիների կառուցում՝ բազալտե և բետոնե կանոնավոր սալիկներով /2710 քմ<br>• Դեկորատիվ շատրվանի կառուցում /36 քմ<br>• Ջրահեռացման և ոռոգման համակարգի անցկացում /146 գծամետր<br>• Դեկորատիվ նստարանների տեղադրում/ 12 հատ<br>• Ծաղկանոցների կառուցում /4 գազոն՝ 340 քմ<br>• Կանաչապատում<br>• Արտաքին լուսավորության անցկացում / 40 սյուն<br>✓ *Ճեմուղու շահագործման հանձնում*<br>✓ *համայնքի բյուջեում պահպանման և շահագործման համար անհրաժեշտ ծախսերի նախատեսում* |
| **Ծրագրի ազդեցությունը շահառուների վրա** | ***Շահառուների քանակը:***<br>*- Գորիս բնակավայրի մշակույթի տան հարակից տարածքում բիզնես գործունեություն ծավալող և նախատեսվող ձեռնարկատերեր՝ 40 գործող և 20 նախատեսվող*<br>*- Գորիսում գործող հյուրանոցային տնտեսության 23 օբյեկտներ*<br>*- Գորիս բնակավայրի բնակչություն՝ 21290 մարդ*<br><br>***Եկամուտի ավելացման չափ:*** *- Զբոսայգու հարակից խանութներում եկամուտների աճ ամսական մոտ 100 000 ՀՀ դրամով:*<br>*-Հյուրանոցային տնտեսության օբյեկտների եկամուտների աճ*<br>***Հարմարավետության ապահովման չափը:*** *- ժամանցի և հանգստի կազմակերպման հնարավորությունների ավելացում 1-ով:* |
| **Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող հիմնական աշխատատեղեր** | *Ծրագրի իրականացման ընթացքում*<br>✓ *կստեղծվի 10-15 աշխատատեղ կառուցապատման աշխատանքների իրականացման նպատակով*<br>*Ծրագրի իրականացման արդյունքում*<br>✓ *կստեղծվեն նոր բիզնեսներ՝ հարակից տարածքներում՝ մոտ 15 նոր խանութներ* |
| **Ծրագրի սպասվող միջնաժամկետ և երկարաժամկետ արդյունքները** | ***Առկա խնդիրները:*** *- ժամանցի և հանգստի կազմակերպման սակավ հնարավորություններ*<br>*- քաղաքային աշխուժության ցածր մակարդակ*<br>*- կանաչապատ տարածքների սակավություն*<br><br>***Երկարաժամկետ արդյունք:*** *- Գորիսը սոցիալապես և տնտեսապես զարգացած է ու գրավիչ՝ որպես քաղաքային միջավայր և զբոսաշրջային կենտրոն*<br><br>***Միջնաժամկետ արդյունք:*** *- ժամանցի և հանգստի նոր վայրի, առկայություն*<br>*- քաղաքային կյանքի աշխուժացում և ժամանցի նոր հնարավորությունների առկայություն*<br>*- զբոսայգու հարակից տարածքում մանրածախ առևտրով* |

| | |
|---|---|
| | *զբաղվող*<br>*ձեռնարկատերերի եկամուտների աճ* |
| **Համայնքի 2017 թվականի բյուջեն և բյուջեի կատարողականը** | *Համայնքի 2017թ-ի բյուջեի կատարողականը*<br>*Բյուջեի եկամուտները և ծախսերը անվանումը*<br>*Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտները*<br>*Պլան  Փաստացի  Տոկոս*<br>*772,136,500  817,747,363  106*<br><br>*Այդ թվում՝*<br>*Սեփական եկամուտներ*<br><br>*Պլան  Փաստացի  Տոկոս*<br>*153,503,000  204,103,364  132.96*<br><br>*2. Ընդամենը համայնքի բյուջեի ծախսերը, որից՝*<br><br>*2.1 Վարչական բյուջեի ծախսեր  730,794,570.0*<br>*2.2 Ֆոնդային բյուջեի ծախսեր  46,493,820 2*<br><br>*Համայնքի ֆոնդային բյուջեի 2017թ. Փաստացի ծախսերի բացվածք*<br><br>*1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ  13,808,920*<br>*2. Ճանապարհային տնտեսություն  33,191,872*<br>*3. Փողոցային լուսավորության ցանցի կառուցում  14,268,060*<br>*4. Այլ ծախսեր  3,670,000*<br><br>*Ընդամենը*<br>*64,938,852 ՀՀ դրամ* |
| **Համայնքի 2018 թվականի բյուջեն** | *Ընդամենը՝ 960,860,700.0 դրամ*<br>*Վարչական՝ 826,163,200.0 դրամ*<br>*Ֆոնդային՝ 134,697,500.0 դրամ*<br><br>*Համայնքի ֆոնդային բյուջեի 2018թ. Պլանավորված ծախսերի բացվածքը*<br><br>*1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ  3,000,000*<br>*2. Շրջակա միջավայրի պաշտպանություն  96,097,500*<br>*3. Ճանապարհային տնտեսություն  30,600,000*<br>*4. Այլ ծախսեր  5,000,000* |
| **Համայնքի 2018 թվականի բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքե-րի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով 2018 թվականի կան-խատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով** | *Համայնքի բյուջեի ֆոնդային մասը տարեսկզբին կազմում էր 134,697,500 0 դրամ*<br>*2018թ. բյուջետային տարում համայնքի բյուջեի ֆոնդային մասի մուտքեր կանխատեսվում են 11,000,000.0 դրամի չափով: Համայնքի սեփականությունը հանդիսացող ֆոնդերի օտարումից (տարածքների վաճառքից):*<br><br>*Ընդամենը ֆոնդային բյուջեի գումարը՝ 145,697,500.0 մլն դրամ*<br>*Մշակույթի տան հարակից ճեմուղու բարեկարգման համաֆինանսավորման համար գումարը՝ 21,405,960 դրամ* |

| | |
|---|---|
| Ծրագրի ընդհանուր բյուջեն | *53 514 900 ՀՀ դրամ (100%)* |
| Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը | *21 405 960 ՀՀ դրամ (40%)* |
| Այլ ներդրողներ | *Այլ ներդրողներ չկան* |
| Ծրագրի իրականացման տևողությունը | *Ակիզբ մայիս 2018թ.* *Տևողությունը՝ 4 ամիս:* |
| Ծրագրի ծախսերը | *Նախագծանախահաշվային և այլ փաստաթղթերը կցվում են* |
| Ամսաթիվ | “05” ապրիլ 2018թ. |

**Այլ տեղեկություններ ծրագրի մասին.** *(Նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):*

**Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Մենուա Հովսեփյան**
**Հեռախոս, Էլ. Փոստ՝ 099-47-00-44, joujou1354@mail.ru**

---

**Համայնքի ղեկավար** <u>Առուշ Առուշանյան</u>
*(անուն, ազգանուն)*

ԿՏ.

Հավելված N-3
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու
2018 թվականի ապրիլի 07-ի N-28-Ա որոշման

**ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային**
**ՀԱՅՏ**

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | *Կենտրոնական հրապարակի հարող տարածքի բարեկարգում / Գավառագիտական թանգարանի հարակից այգի/* |
| Մարզ | *Սյունիքի մարզ* |
| Համայնքը /համայնքները | *Գորիս համայնք*<br>*Գորիս բնակավայր* |
| Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից | *Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 240կմ է.* |
| Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք | *Համայնքը սահմանամերձ է.* |
| Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը | *Գորիսը գտնվում է Սյունիքի մարզի հյուսիսի-արևելյան հատվածում: Համայնքի տարածքը կազմում է 31969.28 հեկտար, բնակչությունը՝ 29721 մարդ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1398 մ, հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 240 կմ, մարզկենտրոն Կապանից՝ 67 կմ: Համայնքն ունի աշխարհագրական հարմար դիրք:*<br>*Գորիսը, որպես ձեռնարկատիրական գործունեության և ներդրումների համար կայուն, ապահով, զբոսաշրջության համար գրավիչ, պատմամշակութային ռեսուրսներով հարուստ համայնք, մեծ ներուժ ունի առաջարկելու մրցունակ զբոսաշրջային ծառայություններ:*<br>*Այցելության հայտնի վայրերից են «Տաթևի վանքը », «Սատանայի կամուրջը», Խնձորեսկի «Ճոճվող կամուրջը» աշխարհում ամենաերկար թռիչքով «Տաթևի ճոպանուղին » և այլն: Հին Գորիսի «Քարե անտառը» չափազանց մեծ հետաքրքրություն է առաջացնում արկածասեր մարդկանց մոտ:*<br>*Վերջին հինգ տարիների ընթացքում զբոսաշրջության ոլորտը զգալի աճ է ունեցել՝ ներգնա զբոսաշրջային այցելությունների թվի առումով: Օրինակ՝ 2017 թվականին 6000-ով ավելի զբոսշրջիկ է օգտվել համայնքի հյուրանոցային ծառայություններից, քան՝ 2016թ-ին. Ավելացել է նաև պատմամշակութային վայրեր այցելող հյուրերի թիվը միայն Խնձորեսկի Ճոճվող կամուրջ այցելողների թիվը 2017թ-ին ավելացել է 30.000-ով:*<br>*Զբոսաշրջությունը համայնքի համար կարևոր դեր ունի աշխատատեղերի ստեղծման գործընթացում: Գործող հյուրանոցներում, ռեստորաններում, ժամանցի վայրերում, տրանսպորտային համակարգում և հուշանվերների վաճառքի կետերում, անուղղակիորեն՝ զբոսաշրջության հետ առնչվող ձեռնարկություններում (սննդի և այլ ծառայություններ, առևտուր) վերջին մեկ տարվա ընթացքում զբոսաշրջության հաշվին 217 աշխատատեղ է ստեղծվել համայնքում: Շուրջ 40 աշխատատեղ՝ տարբեր կազմակերպությունների ծրագրերում ներգրավված անձինք են, այդ թվում՝ ձեռագործությամբ, հուշանվերների զարգացման և վաճառքի ոլորտում;*<br>*Հյուրանոցային, սրճարանային և սպասարկման այլ ոլորտում աշխատանքի անցած աշխատակիցների թիվը 54 է: Սննդի, սպասարկման ոլորտում ավելացել է 26 աշխատատեղ, ևս 97-ը՝ շինարարության ոլորտում:*<br>*Թեև զբոսաշրջությունը համայնքի համար ապահովում է կայուն եկամուտներ ունենալու հնարավորություն և արժանագրում է իրատեսական զարգացում, այնուամենայնիվ առկա են խնդիրներ, որոնք խոչընդոտում են ոլորտի հեռանկարային զարգացմանը:*<br>*Հաշվի առնելով զբոսաշրջության տնտեսական, սոցիալական դերն ու նշանակությունը, այն համարվում է Գորիս համայնքի ռազմավարական զարգացման գերակա ճյուղերից մեկը և ուղղված է համայնքի կայուն տնտեսական զարգացմանն ու կենսամակարդակի բարձրացմանը:*<br>*Զբոսաշրջության ոլորտը զարգացնելու նպատակով՝ Գորիսում անհրաժեշտ է խթանել նոր* |

| | |
|---|---|
| | ենթակառուցվածքների ձևավորումը և առկա ենթակառուցվածքների բարեկարգումը.<br>Գորիսի կենտրոնական հրապարակի հարակից տարածքը էական դեր ունի կարևոր նշանակության հատվածների , օբյեկտների, կառույցների գործունեության և առաջխաղացման համար: Հրապարակի հիմնական մասը հիմնովին նորոգված է, սակայն հարող տարածքը ամբողջովին անբարեկարգ, քարուքանդ և անմխիթար վիճակում է. Մինդեռ այդ հատվածի շնորհիվ իրար են կապվում կենտրոնական զբոսայիգին, գավառագիտական թնագարանը, բազմաթիվ գրասենյակներ, բանկեր, կազմակերպություններ: Որպես քաղաքի կենտրևոնական հատվածը՝ որտեղ իրականացվում են բազմաթիվ միջոցառումներ, մշակութային նախաձեռնություններ , անհրապույր տեսք ունի և խիստ անհրաժեշտություն կա քաղաքի կենտրոնը ներկայանալի դարձնելու: Գորիսը՝ ԱՊՀ մշակութային մայրաքաղաք ծրագրի ծրջանակներում , միայն 2018թ. Նախատեսվում են 50-ից ավելի միջոցառումներ, որոնք ենթադրում են մեծ թվով հյուրերի այցելություն: Իրականացվող միջոցառումների արդյունքում հյուրերի հոսքը զբոսաշրջային նոր հնարավորությունների հեռանկարներ է ստեղծում համայնքի համար: ՈՒստի նշված հատվածի բարեկարգումը առաջնային նշանակություն ունի հյուրերին պատշաճ ընդունելու , տնտեսական զարգացման հեռանկարներ ստեղծելու , նոր բիզների ստեղծման և գործողների առաջխաղացաման ապահովման համար:<br>Վերը նշված բոլոր առաջարկներ ուղղված են առաջնային ծառայությունների ծավալների, որակի և մատչելիության աճին: Այս զարգացումն ինքնին կպահանջի ավելի բարձրակարգ ենթակառուցվածքներ և ծառայություններ, զբոսաշրջության զարգացմանը խթանող ավելի նպաստավոր միջավայր:<br>Այս ամենը կարելի է իրագործել՝ նպաստելով ներգնա և ներքին զբոսաշրջիկների թվի աճին, միաժամանակ ավելացնելով զբոսաշրջությունից ստացվող եկամուտները, առաջարկելով ավելի բարձր զբոսաշրջային ծառայություններ, և համայնքի համար ապահովելով ֆինանսական հոսքեր:<br>Ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ համայնքում կապահովվի հետևյալ ուղղակի և անուղղակի արդյունքը: Ուղղակի երկամուտներ՝ զբոսաշրջության ոլորտում ստեղծված աշխատատեղերից: Անուղղակի եկամուտներ՝ ապրանքների և մատուցվող ծառայությունների վաճառքից: Նշված առաջարկությունների իրականացումը հնարավորություն կտա նաև մեկ քայլ առաջ անցնել՝ մոտենալով համայնքի զարգացման տեսլականին:<br>Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը բխում է նաև Գորիսը՝ 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք հռչակվելու փաստից, ինչը ենթադրում է մեծաթիվ պաշտոնական հյուրերի այցելություն Գորիս: Գորիսում անցկացվելիք միջոցառումների բարձր որակը և համայնքի ներկայանալի տեսքը անհրաժեշտ է նաև նրանով, որ Գորիսը փաստորեն ներկայացնելու է ողջ ՀՀ-ն: |
| Ծրագրի իրականացման նպատակը | Ընդհանուր նպատակ.<br>✓ ենթակառուցվածքների բարելավման միջոցով նպաստել զբոսաշրջության զարգացմանը՝ Գորիս համայնքում ստեղծելով տնտեսական զարգացման համար բարենպաստ միջավայր, ապահովելով երկարաժամկետ զարգացում<br><br>Հատուկ նպատակներ.<br>✓ ընդլայնել ժամանցի և հանգստի գոտիները<br>✓ քաղաքաբնակների և այցելուների համար ստեղծել ժամանցի կազմակերպման նոր հնարավորություններ<br>✓ նպաստել զբոսայգու հարակից տարածքում մանրածախ առևտրի զարգացմանը |
| Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում | Հրապարակի համար նախատեսված տարածքը հանդիսանում է համայնքային սեփականություն:<br>Ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են: |
| Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրա- | ✓ Բարելավվել է Զբոսաշրջային ենթակառուցվածքների, պատմական նշանակության որոշ վայրերի ներկա անմխիթար վիճակը, որի շնորհիվ ավելի շատ քանակով և բարձր վճարողունակությամբ զբոսաշրջիկներ են սպասարկվում, ավելացել են հյուրանոցները, սպասարկման օբյեկտները: Ստեղծվել է 250 աշխատատեղ՝ ոլորտի աշխուժացման |

| | |
|---|---|
| կանացման նպատակին | արդյունքում: <br>✓ Բարելավվել է զբոսաշրջության կայուն զարգացման և ոլորտում մատուցվող ծառայությունների որակը, համայնքում ձևավորվել և զարգացել են ոլորտը սպասարկող ենթակառուցվածքները՝ միջհամայնքային ճանապարհներ, ժամանցի վայրեր, պատմական նշանակության վայրեր <br>✓ Բարելավվել է հյուրանոցային տնտեսության օբյեկտների, բարձրակարգ հյուրանոցների գործունեությունը, համայնքում ձևավորվել է զբոսաշրջային տների ցանց: Ավելացել համայնք այցելող զբոսաշրջիկների թիվը: |
| Ծրագրի յուրաքանչյուր արդյունքի հասնելու համար անհրաժեշտ միջոցառումները | " նախագծանախահաշվային աշխատանքների իրականացում <br>" գնման գործընթացի կազմակերպում <br>" շինարարական աշխատանքների իրականացում /Մակերեսը՝ 3390քմ <br>• Ծաղկանոցների կառուցում՝ 690քմ <br>• Բետոնե և բազալտե հատակների կառուցում՝ 2700քմ <br>• Եզրառուների կառուցում՝ 123 գծամետր <br>• Դեկորատիվ ջրավազանների կառուցում՝ 2 հատ՝ ընդհանուր 60քմ <br>• Կանաչապատում՝ դեկորատիվ ծառերով և թփերով՝ 80 հատ <br>• Նստարանների տեղադրում՝ 12 հատ <br>✓ Հրապարակի հարակից տարածքի հանձնում <br>✓ Համայնքի բյուջեում պահպանման և շահագործման համար անհրաժեշտ ծախսերի նախատեսում |
| Ծրագրի ազդեցությունը շահառուների վրա | Շահառուների քանակը: <br>- Գորիս բնակավայրի բնակչություն՝ 21290 մարդ, համայնք այցելող զբոսաշրջիկներ՝ տարեկան 17.000: <br>- Հրապարակին կից 15 բիզների զարգացում՝ եկամուտի 25% բարձրացում , նոր ծառայությունների ավելացում՝ այդ թվում, 3 սրճարան, 1-գրադարան –սրճարան <br>- Կենտրոնական հատվածում գործող տարբեր ծառայություններ մատուղող 10 գրասենյակների թվի ավելացում <br>- Հարապարակում իրականացվող մշակութային միջոցառումների հաշվին համայնք այցելող հյուրերի ժամանցի կազմակերպում: Գորիսում գործող հյուրանողային տնտեսության 23 օբյեկտներ այցելող զբոսաշրջիկների թվի, տեղական բիզնեսների եկամուտի, նոր աշխատատեղերի ավելացում. <br>-Հրապարակի հարևանությամբ Երկրագիտական թանգարանի այցելուների թվի աճի հաշվին ավելացել է մատուցվող ծառայության դիմաց մուտքի վճարների թիվը, ավելացել են համայնքի եկամուտները <br>- Հրապարակին հարող տարածքին կից գտնվող ձեռագործության ստուդիա այցելող զբոսաշրջիկների թիվնա ավելացլ է, ձեռքգործ 50 կանանց թիվը հասել է 75 ի: Մեծացել է ստուդիայում ներկայացված ձեռագործ հուշանվերների ծավալը՝ 75 ընտանիքների համար ապահովելով կայուն տնտեսական եկամուտներ <br>Հարմարավետության ապահովման չափը: - Ժամանցի և հանգստի կազմակերպման հնարավորությունների ավելացում՝ |
| Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող հիմնական աշխատատեղեր | Ծրագրի իրականացման ընթացքում <br>✓ կստեղծվի 18-23 աշխատատեղ կառուցապատման աշխատանքների իրականացման նպատակով <br>Ծրագրի իրականացման արդյունքում <br>✓ Համայնքում կստեղծվեն նոր բիզնեսներ՝ մոտ 27 նոր տեսակի ծառայություններ |
| Ծրագրի սպասվող միջնաժամկետ և երկարաժամկետ | Առկա խնդիրները: - ժամանցի և հանգստի կազմակերպման սակավ հնարավորություններ <br>- քաղաքային աշխուժության ցածր մակարդակ <br>- կանաչապատ տարածքների սակավություն |

| | |
|---|---|
| **արդյունքները** | Երկարաժամկետ արդյունք: - Գորիսը սոցիալապես և տնտեսապես զարգացած է ու գրավիչ՝ որպես քաղաքային միջավայր և զբոսաշրջային կենտրոն<br><br>Միջնաժամկետ արդյունք: - ժամանցի և հանգստի նոր վայրի, առկայություն<br>- քաղաքային կյանքի աշխուժացում և ժամանցի նոր հնարավորությունների առկայություն<br>- զբոսայգու հարակից տարածքում մանրածախ առևտրով զբաղվող տնտեսվարողների եկամուտների աճ |
| **Համայնքի 2017 թվականի բյուջեն և բյուջեի կատարողականը** | Համայնքի 2017թ-ի բյուջեի կատարողականը<br>Բյուջեի եկամուտները և ծախսերը անվանումը<br>Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտները<br>Պլան Փաստացի Տոկոս<br>772,136,500 817,747,363 106<br><br>Այդ թվում՝<br>Սեփական եկամուտներ<br><br>Պլան Փաստացի Տոկոս<br>153,503,000 204,103,364 132.96<br><br>2. Ընդամենը համայնքի բյուջեի ծախսերը, որից՝<br><br>2.1 Վարչական բյուջեի ծախսեր 730,794,570.0<br>2.2 Ֆոնդային բյուջեի ծախսեր 46,493,820.2<br><br>Համայնքի ֆոնդային բյուջեի 2017թ. Փաստացի ծախսերի բացվածք<br><br>1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ 13,808,920<br>2. Ճանապարհային տնտեսություն 33,191,872<br>3. Փողոցային լուսավորության ցանցի կառուցում 14,268,060<br>4. Այլ ծախսեր 3,670,000<br><br>Ընդամենը<br>64,938,852 ՀՀ դրամ |
| **Համայնքի 2018 թվականի բյուջեն** | Ընդամենը՝ 960,860,700.0 դրամ<br>Վարչական՝ 826,163,200.0 դրամ<br>Ֆոնդային՝ 134,697,500.0 դրամ<br><br>Համայնքի ֆոնդային բյուջեի 2018թ. Պլանավորված ծախսերի բացվածքը<br><br>1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ 3,000,000<br>2. Շրջակա միջավայրի պաշտպանություն 96,097,500<br>3. Ճանապարհային տնտեսություն 30,600,000<br>4. Այլ ծախսեր 5,000,000 |
| **Համայնքի 2018 թվականի բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքե-րի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով** | Համայնքի բյուջեի ֆոնդային մասը փարեսկզբին կազմում էր 134697500.0 դրամ<br>2018թ. բյուջետային տարում համայնքի բյուջեի ֆոնդային մասի մուտքեր կանխատեսվում են 46000000.0 դրամի չափով, որից 110000000 համայնքի սեփականությունը հանդիսացող ֆոնդերի օտարումից (տարածքների վաճառքից), 35000000 նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին բյուջե սփացված մուտքեր՝ կրամադրված ներքին աղբյուրներից:<br>Ընդամենը ֆոնդային բյուջեի գումարը կանխատեսվում է՝<br>180697500.0 դրամ, որից՝<br>23000000 - Մեքենա սարքավորումների ձեռքբերման /որից 17500000 տարածքային |

| | |
|---|---|
| 2018 թվականի կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով) | *զարգացման հիմնադրամի համապեղ ծրագրի համաֆինանսավորման համար, մնացածը այլ ծրագրեր, Ուրբան և այլը/*<br>*30000000 - Ճանապարհների ասֆալտապատման և փոսալցման համար*<br>*127697500 - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում՝ որից*<br>*25000000 - Մշակույթի տան հարակից ճեմուղու բարեկարգման համաֆինանսավորման համար*<br>*59286887 - Դիտակետի և հարակից ճանապարհի համաֆինանսավորման համար*<br>*35152953 - Կենտրոնական հրապարակի հարակից տարածքի բարեկարգում /տվյալ ծրագիր/*<br>*5000000 - Նախադպրոցական հաստատությունների վերանորոգման համար*<br>*3257660 - Այլ շենքերի և շինությունների պահպանման ծախսեր* |
| Ծրագրի ընդհանուր բյուջեն | *87 882 380 ՀՀ դրամ (100%)* |
| Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը | *35 152 953 ՀՀ դրամ (40%)* |
| Այլ ներդրողներ | *Այլ ներդրողներ չկան* |
| Ծրագրի իրականացման տևողությունը | *Ակիզբ մայիս 2018թ.* *Տևողությունը՝ 6 ամիս* |
| Ծրագրի ծախսերը | *Նախագծանախահաշվային և այլ փաստաթղթերը կցվում են* |
| Ամսաթիվ | *"05" ապրիլ 2018թ.* |

**Այլ տեղեկություններ ծրագրի մասին.** *(Նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):*

**Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Մենուա Հովսեփյան**
**Հեռախոս, Էլ. Փոստ՝ 099-47-00-44, joujou1354@mail.ru**

---

**Համայնքի ղեկավար՝** **Առուշ Առուշանյան**
*(անուն, ազգանուն)*

ԿՏ.